

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հովհաննես Մարգարյանի, Հեղինե Բիշարյանի, Լևոն Դոխտյանի, Հայկ Բաբուխանյանի և Խոսրով Հարությունյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-437-04.02.2014-ՍՀ-010/0) վերաբերյալ:

Սկզբունքորեն ընդունելով ներկայացված նախագծի շրջանակներում արծարծված խնդրի կարգավորման անհրաժեշտությունը՝ հարկ ենք համարում նշել, որ լրացուցիչ քննարկման (հստակեցման) կարիք ունեն կարգավորման առաջարկվող մեխանիզմները:

Մասնավորապես, առաջարկվող նախագիծն ամբողջությամբ չի կարգավորում հղիության 22-րդ շաբաթվանից հետո մահացած պտղի ծնվելու (մեռելածնության) դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման և վճարման առանձնահատկությունները: Միաժամանակ, համաձայն «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկում ենք ուժը կորցրած ճանաչել «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ կետը, իսկ հղիության 22-րդ շաբաթվանից հետո պերինատալ (շուրջծննդյան) շրջանում պտղի մահվան դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման և վճարման առանձնահատկությունները կարգավորել Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկության ընդունման դեպքում: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր պատրաստակամությունն է հայտնում միանվագ նպաստի նշանակման և վճարման առանձնահատկությունների հետ կապված հարցերը քննարկել և հստակեցնել նախագծի հեղինակների հետ:

Հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հա-

յաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի լրամշակված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության համար ընդունելի տարբերակը և կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1: «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12 ՀՕ-154-Ն օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2: Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ի թիվս այլ նպաստների, սահմանվում է նաև երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման և վճարման պայմաններն ու կարգը:

Օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստ չի նշանակվում, եթե երեխան ծնվել է մահացած:

Վերը նշված դրույթի իրավակիրառական պրակտիկայում կարող են առաջանալ խնդիրներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ երբեմն կենսաբանորեն բարդ է սահմանազատել՝ երեխան ծնվել է մահացած, թե մահացել է ծնվելուց անմիջապես հետո:

Ըստ այդմ, Օրենքի 24-րդ հոդվածի համապատասխան դրույթների կիրարկման շրջանակներում կարող են առաջանալ կոռուպցիոն ռիսկեր:

Օրենքի 24-րդ հոդվածի համապատասխան դրույթների կիրարկումը խնդրահարույց է նաև սոցիալական և բարոյահոգեբանական տեսանկյունից:

Ըստ այդմ, առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը:

Միաժամանակ, նախագիծն ընդունվելուց հետո, անհրաժեշտ կլինի փոփոխություններ (լրացումներ) կատարել ՀՀ կառավարության համապատասխան որոշման մեջ՝ կարգավորելով երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման և վճարման առանձնահատկությունները հղիության 22-րդ շաբաթվանից հետո պերինատալ (շուրջծննդյան) շրջանում պտղի մահվան դեպքում:

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
ի ընդունման դեպքում**

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

**«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի նախագծի՝ սոցիալական պաշտպանության բնագավառում կարգավորման
ազդեցության գնահատման**

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2010թ. հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի չեզոք ազդեցություն,

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի դրական ազդեցություն:

**ՀԱՎԱԿՈՒՄՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
վերաբերյալ**

««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման**

1. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում
կարգավորման ազդեցության գնահատման**

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է նշանակել երեխայի ծննդյան միանվագ նպաստ, եթե երեխան ծնվել է մահացած:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր
և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության
գնահատման**

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է երեխայի ծննդյան միանվագ նպաստի տրամադրման հետ կապված հարաբերություններին* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն *չի նախատեսվում*:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է երեխայի ծննդյան միանվագ նպաստ տանալու իրավունքը վերապահել նաև այն ծնողներին, որոնց երեխաները ծնվել են մահացած: Նշված փոփոխությունը ենթադրում է ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ Ֆինանսական միջոցների անհրաժեշտություն (ֆինանսական գնահատականը բացակայում է), իսկ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացություն հնարավոր է տալ ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի N 13 նիստի արձանագրության 2-րդ կետով հավանության արժանացած իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումների 337-րդ կետով սահմանված ձևաչափով տեղեկանքի և անհրաժեշտ հաշվարկ-հիմնավորումների, իսկ կոնկրետ թվային գնահատականի անհնարինության դեպքում՝ նույն ցուցումների 341-րդ կետով սահմանված համապատասխան վերլուծության առկայության պարագայում:

Հաշվի առնելով, որ ՀՀ օրենսդրության համաձայն վճարված նպաստների գումարները «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն համարվում են նվազեցվող եկամուտներ՝ գտնում ենք, որ Նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա կլինի չեզոք:

Պ-437-04.02.2014-ՍՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1: «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12 ՀՕ-12.12.2013 օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ

3. «Եթե երեխան ծնվել է մահացած, ապա երեխայի ծննդյան միանվագ նպաստը տրվում է ծննդատան կողմից տրված տեղեկանքի հիման վրա»:

Հոդված 2: Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

**«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ միանվագ նպաստ տրամադրվի նաեւ այն ծնողներին, որոնց երեխան ծնվել է մահացած:

Օրենքի ընդունումը եւ սոցիալական, եւ բարոյահոգեբանական, եւ մարդասիրական տեսանկյունից արդարացված քայլ է. ավելին՝ կենսաբանորեն բավականին բարդ է ապացուցել՝ երեխան ծնվել է մահացած, թե մահացել է ծնվելուց անմիջապես հետո, ինչն էլ լուրջ կոռուպցիոն դրսեւորումների առիթ կարող է հանդիսանալ փաստն արձանագրելու համար: